ՔՐԻՍՏԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ԻՄԱՆՈՒԻԼ ԿԱՆՏԻ և ԿԱՐԼ ՊՈՊԵՐԻ ՄՈՏ

Մինչ Ի. Կանտը և Կ. Պոպերը փիլիսոփայության պատմության ընթացքում գիտական գիտելիքի հիմնավորման հարցի շուրջ գոյություն է ունեցել երկու փիլիսոփայական ուղղություն՝ *ռացիոնալիզմ* և *էմպիրիզմ*: Էմպիրիզմի տեսակետի համաձայն՝ գիտելիքը հիմնավորվում է փորձի միջոցով: Յուրաքանչյուր ընդհանուր դատողություն արտաքին աշխարհի մասին հիմնվում է փորձի արդյունքների վրա: Ակնհայտ է, որ փորձի արդյունքում կարող ենք ունենալ բացառապես եզակի փաստեր, սակայն գիտական օրենքները ձևակերպվում են ոչ թե եզակի, այլ ընդհանուր դատողությունների տեսքով: Եզակի դատողություններից անցումը ընդհանուր դատողությանների կատարվում է ինդուկցիայի միջոցով: Էմպիրիզմի կողմնակիցներ են 17-րդ դարի խոշոր մտածողներ Ֆ.Բեկոնը, Թ.Հոբսը, և Ջ.Լոկը: Էմպիրիզմը ունի մի շարք ներքին պրոբլեմներ: Առաջին պրոբլեմը վերաբերում է մեր զգայությունների հավաստիությանը: Խնդիրն այն է, թե արդյոք մեր զգայությունները մեզ կարող են տալ անսխալ պատկերացումներ: Մենք չունենք որևէ միջոց, որպեսզի ստուգենք մեր զգայություններից ստացված գիտելիքի ճշմարտացիությունը: Հետևաբար, այդ գիտելիքը միշտ պրոբլեմատիկ է: Էմպիրիզմն ունի նաև մեկ պրոբլեմ՝ ինդուկցիայի պրոբլեմը: Ենթադրենք, որ մենք չունենք մեր զգայությունների հավաստիության պրոբլեմը, մեր զգայությունները մեզ չեն խաբում, այսինքն՝ եզակի դատողությունները հավաստի են: Հարց է առաջանում՝ իրավունք ունենք եզակի դատողություններից կատարել ընդհանուր եզրահանգումներ: Մասնավորապես, որքա՞ն գիտափորձ պետք է կատարվի մատերիական մարմինների միջև, որպեսզի իրավունք ունենանք պնդելու, որ բոլոր մատերիական մարմինները ղեկավարվում են Նյուտոնի օրենքներով: Հետևաբար, ինդուկտիվ մտահանգումը նաև ունի պրոբլեմատիկ բնույթ: Բավական է մեկ անհամապատասխանություն, որպեսզի հերքվի ընդհանուր դատողությունը:

Ինդուկցիան կարող է լինել հուսալի միայն այն դեպքում, եթե ստուգված են բոլոր հնարավոր դեպքերը: Սակայն բնության մեջ սկզբունքորեն հնարավոր չէ ստուգել բոլոր հնարավոր դեպքերը: Օրինակ՝ հարց է առաջանում՝ ի՞նչ հիմքով ենք պնդում, որ բոլոր մատերիական մարմինները ձգում են իրար որոշակի ուժով: Ենթադրենք՝ մենք դիտարկել ենք մի շարք մոլորակների միջև ձգողականության ուժը և պարզել, որ բոլոր դիտարկված դեպքերում մոլորակները շարժվում են միակերպ: Հետևաբար, մենք պնդում ենք՝ բոլոր այն մոլորակները, որոնք չեն դիտարկվել փորձում, ևս պետք է նմանատիպ շարժվեն: Ի՞նչ հիմքով է արված այս պնդումը, ինչու՞ ենք մենք համոզված, որ բոլոր մոլորակները պետք է իրենց դրսևորեն միատիպ:

Էմպիրիստի պատասխանը հետևյալն է. բոլոր միաձև իրերը միևնույն պայմաններում իրենց դրսևորում են միաձև: Այսպիսով, մենք սկզբից ևեթ ենթադրում ենք բնության միակերպության սկզբունքը: Եթե այս սկզբունքը նախօրոք ընդունում ենք, ապա այն մեզ ազատում է անվերջ փորձ կատարելու անհրաժեշտությունից: Իսկ եթե Էմպիրիստին հարցնենք, թե ինչի վրա է հիմնված այդ սկզբունքը, նա կպատասխանի, որ այն ստացվել է միլիոնավոր փորձերի արդյունքում: Կարծես՝ առաջանում է տրամաբանական շրջապտույտ. մի կողմից ինդուկցիան հիմնվում է բնության միակերպության սկզբունքի վրա, իսկ մյուս կողմից այդ սկզբունքը ձևավորվում է փորձի արդյունքում. ստացվում է, որ ինդուկցիայի պրոբլեմի նմանատիպ լուծումն անընդունելի է: Առաջին անգամ այս պրոբլեմը դիտարկվել է 18-րդ դարի փիլիսոփա Դ.Հյումի կողմից: Հյումը գտնում է, որ վերոհիշյալ սկզբունքը ստացվում է փորձի արդյունքում, և միևնույն ժամանակ, որպեսզի միշտ այդ փորձը չկրկնենք, մենք այդ սկզբունքը տարածում ենք մնացած նմանատիպ երևույթների վրա[1]: Նա ցույց է տալիս, որ պատճառականության սկզբունքը, որը թույլ է տալիս լուծել ինդուկցիան, տրամաբանորեն ապացուցել հնարավոր չէ, և մեզ մնում է միայն հավատալ այդ սկզբունքի ճշմարտացիությանը[2]:

Հյումի տեսակետի համաձայն՝ մեր գիտելիքը չի կարող լինել բացարձակ ճշմարիտ, հետևաբար՝ այն դառնում է կարծիք: Մենք միայն կարող ենք հավատալ, որ չենք սխալվում, իսկ ապացուցել հնարավոր չէ: Արտաքին աշխարհի մասին միայն հնարավոր են կարծիքներ: Այս

---

[1] Տես Д.Юм. Соч. в 2-х томах, том 2, М.: "Мысль", 1966, էջ 282:
[2] Տես նույն տեղում, էջ. 204-205:

տեսակետը անվանվում է սկեպտիցիզմ: Ռացիոնալիզմի կողմնակիցները գտնում էին, որ մեր գիտելիքը չի կարող հիմնավորվել փորձի միջոցով, այն հիմնված է ապրիորի համընդհանուր սկզբունքների վրա: Որպեսզի գոյություն ունենա հուսալի և ճշմարիտ գիտելիք, անհրաժեշտ է, որ այն հիմնվի բանականության համընդհանուր սկզբունքների վրա: 17-րդ դարի ռացիոնալիզմի խոշոր ներկայացուցիչներն են Ռ.Դեկարտը, Վ.Լայբնիցը և Բ.Սպինոզան: Լայբնիցի կարծիքով մարդկային ոգու մեծության շնորհը բանական ճանաչողությունն է: Զգայական փորձը, ըստ նրա, հատուկ է նաև կենդանիներին, քանի որ նրանք էլ ունեն զգայական պատկերացումներ, սակայն դատարկ զգայական փորձը դեռ քիչ է իսկական իմացություն դառնալու համար: «Բնական ճանապարհով մեր հոգու մեջ ոչինչ չի մտնում դրսից, և միայն վատ սովորությանբ ենք կարծում՝ իբր մեր հոգին իր մեջ ընդունում է «սուրհանդակներ» և ասես ունի դռներ ու պատուհաններ: Բոլոր այդ ձևերը մեր հոգու մեջ են, ընդ որում մշտապես, քանի որ հոգին միշտ արտահայտում է իր ապագա բոլոր մտքերը և արդեն մտածում է այն ամենի մասին, ինչը երբևէ հստակ մտածելու է, և մենք չենք կարող իմանալ որևէ բան, եթե մտքում արդեն չունենանք դրա գաղափարը»[3]:

Փաստորեն, կարող ենք ունենալ մինչփորձնական գիտելիք, ինչպես օրինակ, բնության միանմանության սկզբունքը, որը ակնհայտ է և ենթակա չէ ապացուցման: Իսկ մնացած գիտելիքը կարող ենք բխեցնել այդ համընդհանուր սկզբունքներից դեդուկտիվ մտահանգման միջոցով: Հարց է առաջանում՝ ինչի՞ հիման վրա ենք ընդունում համընդհանուր սկզբունքները, արդյոք ապացուցման կարիք չունե՞ն այդ սկզբունքները, բնության միանմանության սկզբունքը իսկապե՞ս ինքնակնհայտ է, ինչու՞ ենք ընտրում հենց բնության միանմանության սկզբունքը և ոչ թե մեկ ուրիշ համընդհանուր սկզբունք: Այսպիսով, ռացիոնալիզմի հիմնական պրոբլեմն է հիմնավորել այդ հանընդհանուր սկզբունքները:

Կանտին արդեն հայտնի էին էմպիրիզմի և ռացիոնալիզմի ներքին պրոբլեմները, ինչպես նաև՝ Հյումի սկեպտիցիզմը: Այս ամենի հետ մեկտեղ Կանտի համար գոյություն ուներ բացարձակ ճշմարիտ գիտելիք՝ նյուտոնյան մեխանիկան, և, բնականաբար, անհրաժեշտ էր որևէ կերպ հիմնավորել այդ գիտելիքը: Արդյոք Կանտին հաջողվում է լուծել վերը նշված խնդիրները: Ըստ Կանտի, անկասկած է, որ ամեն

---

[3] Գ.Վ.Լայբնից, Մետաֆիզիկական երկեր, Եր., "Սարգիս Խաչենց", 2001, էջ 43:

իմացություն սկսվում է փորձից[4]: Փորձը, բնականաբար, ստացվում է մեր զգայությունների միջոցով: Հետևաբար, Կանտը ստիպված պետք է լինի լուծել զգայությունների հավաստիության պրոբլեմը: Այս պրոբլեմը լուծելու համար Կանտը սահմանափակում է մեր իմացության սահմանները: Կանտի կարծիքով գիտելիք կարող ենք ունենալ միայն փորձում տրված աշխարհի մասին, իսկ զգայությունների հավաստիության պրոբլեմը, այսինքն այն հարցը, թե արդյոք մեր զգայություններից ստացված պատկերացումները համապատասխանում են իրերի իսկական բնույթին, Կանտի համար անընդունելի է: Ինքնին իրերը մեզ տրված չեն, դրանք սկզբունքորեն անճանաչելի են: Հետևաբար, կարելի է ասել, որ նշված պրոբլեմը Կանտի համար գոյություն չունի: Ինչ վերաբերում է ինդուկցիայի պրոբլեմին, ապա Կանտը հստակ առաջարկում է լուծման իր տարբերակը: Ըստ նրա, թեև մեր իմացությունը սկսվում է փորձից, սակայն դա չի նշանակում, որ ամեն ինչ գոյանում է նրանից, քանի որ փորձի վրա հիմնված, այսինքն՝ ինդուկցիայի միջոցով ստացված համընդհանրությունը կարող է միայն համեմատական համընդհանրություն լինել[5]: Այս հարցում Կանտը համաձայն չէ Հյումի հետ: Հյումը գտնում էր՝ համընդհանրությունը չի կարող ունենալ փորձնական բնույթ,այն պետք է լինի ապրիորի, ինչպես կարծում էին Լայբնիցն ու Սպինոզան, բայց քանի որ հնարավոր չէ ցույց տալ այդ սկզբունքների տրամաբանական հիմնավորվածությունը, ապա պետք է հրաժարվել գիտական գիտելիք ունենալու ցանկությունից: Կանտը ցույց տվեց՝ որպեսզի մեր գիտելիքը ունենա համընդհանուր բնույթ, անհրաժեշտ է, որ գոյություն ունենան փորձից անկախ՝ մտածողության ապրիորի-սինթետիկ հիմնադրույթներ (ինչպիսին է, օրինակ, պատճառականության սկզբունքը), որոնց շնորհիվ մեր գիտելիքը կլինի համընդհանուր: Այսպիսով, պատճառականության սկզբունքը Կանտի կողմից համարվում է ֆենոմենների մասին գիտելիք ունենալու նախապայման, որի միջոցով հնարավոր է դառնում լուծել ինդուկցիայի պրոբլեմը: Հարց է առաջանում, թե Կանտի ընդունած պատճառականության սկզբունքն ինչո՞վ է տարբերվում ռացիոնալիստների ընդունած պատճառականության սկզբունքից, քանի որ իրականում սկզբունքի բովանդակությունը պահպանվում է Կանտի մոտ: Ընդունելով այդ սկզբունքը՝ արդյոք Կանտը, ինչպես 17-րդ դարի

---

[4] Տես И.Кант. Соч. в 6-и томах, том 3, М.: "Мысль", 1964, էջ 105:
[5] Տես И.Кант. Соч. в 6-и томах, том 3, М.: "Мысль", 1964, էջ 168:

ռացիոնալիստները, ևս չի կանգնում այն հիմնավորելու անհնարինության առջև: Հարկ է նշել, որ Կանտը, ի տարբերություն ռացիոնալիստների, կարծում էր, որ բնության օրենքները չի կարելի հիմնավորել փորձից անկախ: Դրանք հաստատվում են փորձի միջոցով, բայց միևնույն ժամանակ չեն ձևավորվում փորձի արդյունքում: Մյուս տարբերությունն այն է, որ Կանտի ընդունած պատճառականության սկզբունքը տարածվում է ֆենոմենների՝ փորձում տրված աշխարհի վրա: Մենք նախապես ենթադրում ենք, որ ֆենոմենների աշխարհում ամեն ինչ պատճառավորված է: Այսինքն՝ օգտագործում ենք պատճառականության սկզբունքը այն ժամանակ, երբ ֆիքսում ենք փորձի արդյունքները: Հարց է առաջանում, թե ինչու պիտի ֆենոմենների աշխարհը համապատասխանի պատճառականության սկզբունքին: Ըստ Կանտի ֆենոմենների՝ աշխարհը պետք է այնպես կառուցված լինի, որ մենք կարողանանք այն ճանաչել: Եթե այդ աշխարհը քաոսային լիներ, ապա այն ճանաչելի չէր լինի: Հետևաբար, մեզ տրված իրերի աշխարհը պետք է լինի խիստ պատճառավորված: Այսպիսով, ի տարբերություն ռացիոնալիստների, Կանտը գտնում էր, որ պատճառականության սկզբունքը չի տարածվում ինքնին իրերի աշխարհի վրա: Մինչ Կանտը կարծում էին, որ մեր սկզբունքները պետք է համապատասխանեն արտաքին աշխարհին: Կանտի կարծիքով ֆենոմենների աշխարհը ձևավորվում է մեր սկզբունքների միջոցով:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչպես Պոպերը կլուծեր ռացիոնալիզմի և էմպիրիզմի պրոբլեմները: Արդյոք նրա համար գոյություն ունեի՞ն այդ պրոբլեմները և արդյոք կհամաձայներ Պոպերը Կանտի լուծումների հետ: Սկսենք այն հարցից, թե Պոպերի համար գոյություն ունե՞ր արդյոք զգայությունների հավաստիության պրոբլեմը. և եթե այո, ապա՝ ինչպե՞ս: Պոպերը չի համաձայնվի Կանտի հետ, քանի որ նրա կարծիքով օբյեկտիվ իրականությունը ճանաչելի է, բնական է՝ պետք է խնդիր առաջանա եզակի փաստերի հիմնավորվածության և ճշմարտացիության շուրջ: Սակայն Պոպերի մոտ խնդիրն այլ կերպ է ձևակերպված: Այն հարցին, թե կարող ենք ունենալ բացարձակ ճշմարիտ եզակի փաստեր, նա կտար բացասական պատասխան՝ յուրաքանչյուր եզակի փաստ արտաքին աշխարհի մասին ֆիքսվում է որևէ գործիքի միջոցով: Յուրաքանչյուր գործիքի ստեղծման հիմքում ընկած են գիտական տեսություններ: Հետևաբար, յուրաքանչյուր եզակի փաստի ճշմարտացիություն կախված է մի շարք այլ տեսություններից:

Գիտության պատմությունը ցույց է տալիս, որ բացարձակ ճշմարիտ տեսություններ գոյություն չունեն: Հետևաբար, բացարձակ ճշմարիտ եզակի փաստեր ևս գոյություն չունեն: Ինչ վերաբերում է Հյումի պրոբլեմին, ապա Պոպերը բազմաթիվ հոդվածներ է գրել դրա վերաբերյալ՝ առաջարկելով լուծման իր տարբերակները[6]: Թե որքանով է Պոպերին հաջողվել լուծել այդ պրոբլեմը, դժվար է միանշանակ պատասխան տալ: Նա, ի տարբերություն Կանտի,այս հարցում համաձայն է Հյումի հետ, որը կարծում էր, որ ինդուկցիան տրամաբանորեն լուծել հնարավոր չէ[7]: Հնարավոր չէ տրամաբանորեն հիմնավորել այն պնդումը, ըստ որի բոլոր այն երևույթները, որոնց չենք հանդիպել փորձում, պետք է իրենց դրսևորեն այն երևույթների նման, որոնք արդեն դիտարկվել են փորձում[8]: Ըստ Պոպերի՝ ինդուկցիայի պրոբլեմի տրամաբանական լուծման փորձը հանգեցնում է անվերջ հետընթաց քայլերի: Միևնույն ժամանակ նա չի համաձայնում Հյումի առաջարկած հոգեբանական բացատրության հետ: Ըստ Պոպերի՝ Հյումի նշված եզրահանգման տրամաբանությունը հետևյալն է.

- Մենք հավատում ենք օրինաչափություններին՝ ելնելով դեպքերի հաճախակի կրկնության փաստից: Այս փաստարկն, ըստ Պոպերի, կարելի է հերքել տրամաբանորեն:
- Որևէ երևույթի հաճախակի կրկնությունը հանգեցնում է սովորության: Ըստ Պոպերի՝ սովորությունը կրկնության արդյունք չէ, քանի որ այն կարող է առաջանալ մինչ երևույթի կրկնությունը:
- Յուրաքանչյուր մարդ հավատ ունի օրենքի հանդեպ, որն էլ առաջանում է զգայական ընկալումների կրկնության արդյունքում: Պոպերի կարծիքով զգայական ընկալումները չեն կարող ամբողջովին նույնը լինել, դրանք կարող են ընդամենը նման լինել[9]: Փաստորեն չընդունելով ինդուկցիայի պրոբլեմի տրամաբանական լուծման հնարավորությունը Պոպերը միևնույն ժամանակ չի ընդունում Հյումի առաջարկած հոգեբանական լուծումը: Ըստ Պոպերի՝ ինդուկցիայի պրոբլեմը լուծելու համար անհրաժեշտ է վերաձևակերպել այն: Հյումյան «դրույթներ փորձից» արտահայտությունը փոխարինելով «ստուգող

---

[6] Տես Popper K.R. Ein Kriterium des empirisches Charakters theoretischer Systeme.Erkenntnis, Bd. 3, 1933. S. 426:

[7] Տես К.Поппер. Предположения и опровержения. М.: "АСТ", 2004, էջ 77:

[8] Տես Д.Юм. Соч. в 2-х томах, том 1, М.: "Мысль", 1966, էջ 187:

[9] Տես К.Поппер. Предположения и опровержения. М.: "АСТ", 2004, էջ 81:

դատողությամբ» կամ «բազիսային դատողությամբ», իսկ «փորձից դուրս դրույթներ» արտահայտությունը՝ «համընդհանուր բացատրողական տեսություններ» արտահայտությամբ՝ Պոպերը ինդուկցիայի պրոբլեմը վերաձևակերպում է հետևյալ հարցադրումների միջոցով.

1. Հնարավո՞ր է որևէ համընդհանուր բացատրողական տեսության ճշմարտացիությունը հիմնավորել փորձում տրված եզակի «ստուգող դատողությամբ»: Պոպերն բացասական պատասխան է տալիս: Ըստ նրա՝ որևէ եզակի փաստ չի կարող հիմնավորել առաջադրված համընդհանուր բացատրողական տեսության ճշմարտացիությունը:

2. Հնարավո՞ր է արդյոք որևէ համընդհանուր բացատրողական տեսության ճշմարտացիությունը կամ սխալականությունը հիմնավորել փորձում տրված եզակի «ստուգող դատողությամբ»: Այս հարցին Պոպերը դրական է պատասխանում: Ըստ նրա՝ երբեմն ենթադրվող ճշմարիտ եզակի փաստի միջոցով կարելի է ցույց տալ համընդհանուր բացատրողական տեսության սխալականությունը: Այս գործընթացը տեղի է ունենում հատկապես այն ժամանակ, երբ կարող են գոյություն ունենալ մրցակցող համընդհանուր բացատրողական տեսություններ, և անհրաժեշտություն է առաջանում ընտրել ճշմարտանման տեսությունը[10]: Այսպիսով, ըստ Պոպերի՝ գիտական գիտելիքի հիմնավորումը տեղի չի ունենում ինդուկտիվ մտահանգման միջոցով: Փորձի արդյունքում ստացված եզակի փաստը կարող է ցույց տալ առաջադրված համընդհանուր բացատրողական տեսության սխալականությունը: Այնուհետև մեթոդաբանական որոշման արդյունքում որոշվում է, թե արդյոք այդ փաստը «իրավունք ունի» հերքելու (ֆալսիֆիկացիայի ենթարկելու) առաջադրված տեսությունը: Ինչ վերաբերում է ապրիորի սկզբունքների հիմնավորվածության խնդրին, ապա այն քննարկելու համար նախ պետք է պարզել, թե Պոպերը, առհասարակ, կընդունե՞ր այդպիսի սկզբունքներ: Կարելի է պնդել, որ նա չէր ընդունի այնպիսի ապրիորի սկզբունքներ, ինչպիսիք կընդունեին Դեկարտը, Լայբնիցը, Սպինոզան: Պատճառը, թերևս, այն է, որ, ընդունելով որևէ ապրիորի սկզբունք, մենք միաժամանակ ընդունում ենք, որ մեր գիտելիքը հիմնված է ինչ-որ ֆունդամենտի վրա, որը բացարձակ է ու անփոփոխ: Պոպերը գիտելիքի հիմնավորման համար այդպիսի բացարձակ հիմք չի ընդունում: Հետևաբար, որ նա չի համաձայնի նաև Կանտի ապրիորիզմի հետ[11], որը

---

[10] Տե՛ս К.Поппер. Объективное знание/ Эволюционный подход. М.: , 2002, էջ 17-19:

[11] Տե՛ս К.Поппер. Логика научного исследования. М.: "Республика", 2005, էջ .56:

փորձում էր այդ կերպ փրկել բացարձակ գիտելիքը: Այս վերլուծությունից հետևում է, որ Կանտի և Պոպերի համար գիտական գիտելիքի իդեալները տարբեր են: Ըստ Կանտի՝ մեր գիտելիքը պետք է լինի բացարձակ ճշմարիտ: Այս տեսակետը անվանվում է *ջաստիֆիկացիոնիզմ:* Ջաստիֆիկացիոնիզը ենթադրում է՝ որպեսզի գիտելիքը լինի բացարձակ ճշմարիտ, այն պետք է հիմնված լինի որևէ անհերքելի, անսխալական ու բացարձակ ճշմարիտ հիմքի (ֆունդամենտի) վրա[12]: Կանտի մոտ այդպիսի բացարձակ հիմք էին ապրիորի-սինթետիկ սկզբունքները: Ըստ Պոպերի՝ Կանտը ճշմարիտ է այն հարցում, որ բանականությունն է «ներմուծում» սկզբունքները բնության մեջ, այլ ոչ թե հակառակը, սակայն Կանտը սխալվում էր՝ պնդելով, որ այդ համընդհանուր սկզբունքները բացարձակ ճշմարիտ են և անփոփոխ: Ըստ Պոպերի՝ հնարավոր չէ ունենալ այդպիսի բացարձակ ճշմարիտ, անսխալական գիտելիք, քանի որ գիտելիքի յուրաքանչյուր հատված ենթակա է հերքման և փոփոխության, այսինքն՝ մեր գիտելիքը ի սկզբանե սխալական է: Այս տեսակետը կոչվում է *ֆալիբիլիզմ,* որի կողմնակիցներ են նաև Մ.Բունգեն, Թ.Կունը, Պ.Ֆեյերաբենդը, Ի. Լակատոսը: Այսպիսով, վերլուծության արդյունքում պարզվեց, որ գիտական գիտելիքի հիմնավորման ուղիները տարբեր են Կանտի և Պոպերի մոտ: Տարբեր են նաև էմպերիզմի և ռացիոնալիզմի ներքին պրոբլեմների լուծումները: Ե'վ Կանտը, և' Պոպերն ինչ-որ իմաստով շրջանցեցին զգայությունների հավաստիության պրոբլեմը՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով ինդուկցիայի պրոբլեմի վրա: Կանտն ինդուկցիայի պրոբլեմը լուծեց ապրիորի-սինթետիկ համընդհանուր դատողությունների միջոցով, իսկ Պոպերը, չհամաձայնվելով ինդուկցիայի պրոբլեմի՝ կանտյան տրամաբանական լուծման հետ, վերաձևակերպեց այն վերը նշված հարցադրումների միջոցով՝ ցույց տալով, որ մեր տեսությունները չեն կարող հիմնավորվել փորձի արդյունքում ստացված եզակի դատողությունների միջոցով: Տարբեր է նաև Կանտի և Պոպերի վերաբերմունքն ապրիորի սկզբունքների վերաբերյալ: Պոպերը չի համաձայնվում Կանտի հետ՝ չընդունելով մեկընդմիշտ տրված որևէ ապրիորի սկզբունք: Նշվեց, որ այս տարակարծությունները բխում են նաև գիտական գիտելիքի իդեալի տարբերությունից:

---

[12] Տե՛ս Մ.Бунге. Интуиция и наука, М.: "Прогресс", 1967, էջ .7-8: